6789

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«13» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 175 - 25

Նախաձեռնող՝ ***«Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲԸ***
ք. Երևան, Մաշտոցի պ., 54, 0010:

Գործունեությունը՝ ***Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի հանքերևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ***
Արարատի մարզի,Արարատ համայնք

Առդիր՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 175 - 25

«13» հունիսի **2025թ.**

Արարատի մարզի Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի հանքերևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք, Արարատ բնակավայր

Ներածական մաս. «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրություն 2024-2027թթ ընթացքում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Աշխատանքների համար ընտրված տարածքը ներառված է Արարատ խոշորացված համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական սահմաններում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի հողերը հաշվառված են որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր (03-015-0469-0063 ծածկագրի հողատարածքը՝ այլ հողեր, 03-015-0469-0064 ծածկագրի հողատարածքը՝ արոտավայր): Հողերը վարձակալված են «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերության կողմից:

Երևակման տարածքը հարում է Արաքս գետի ձախափնյա ողողահունի 803-805մ բացարձակ բարձրություններին:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով: Համաձայն «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգ»-ի՝ ըստ երկրաբանական հետախուզվածքի բարդության, Զովեր-1 տեղամասի ավազակոպճային խառնուրդի հանքակը համապատասխանում է 2-1 խմբին:

Հայցվող Զովեր-1 երևակման տեղամասը գտնվում է Արաքս գետից 165-205մ

հեռավորության վրա, գետից բաժանված է պաշտպանիչ արգելաթմբով: Երևակման տարածքը գտնվում է արգելաթմբից 6.8-18.7մ հեռավորության վրա: Տեղամասից 1.1-2.8կմ հեռավորության վրա է գտնվում Կախանովի ջրանցքի համակարգի ենթակառուցվածքները:

Հայցվող տարածքի կոորդինատները ըստ ArmWGS-84 համակարգի՝

	X	Y		X	Y
1.	4405284.8833	8473471.3014	11.	4404595.1285	8474486.9039
2.	4405270.6650	8473543.6531	12.	4404429.4424	8473797.8126
3.	4405186.5643	8473535.7622	13.	4404458.9748	8473585.2877
4.	4405116.8207	8473523.9622	14.	4404478.4104	8473442.2638
5.	4405008.6780	8473516.0700	15.	4404491.1646	8473431.6990
6.	4404900.2536	8473520.0155	16.	4404720.3039	8473316.6352
7.	4404803.0371	8473520.1329	17.	4405010.4944	8473373.9901
8.	4404732.0687	8473532.9811	18.	4405284.8833	8473471.3014
9.	4404695.9084	8473541.1542			
10.	4404721.1422	8474493.7301			

Երևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 39°46'15.28" և արևելյան երկայնության 44°41'29.07":

Հաշվի առնելով երևակման տարածքի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև **8.5մ խորությամբ** (որից 7.5մ՝ օգտակար հաստվածքում) թվով 24 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 2.0մx2.0մ: Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանալու է 816մ^3 զանգված, որից մոտ 48մ^3 հողաբուսական զանգված, 720մ^3 ավազակոպճային խառնուրդ և 48մ^3 ՝ օգտակար հաստվածքը հիմնատակող կավային առաջացումներ:

Տեղամասի ավազակոպճային խառնուրդի կուտակը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական ավազի և խճի արտադրության համար: Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 40x40սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով: Ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից, մեծ կտրվածքով մեծազանգված նմուշները ապահովում են կուտակի հատիկաչափական կազմի բարձր հավաստիության տվյալների ստացումը: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ օգտակար կուտակի ամբողջ հզորությամբ: Ակոսների երկարությունը նախատեսվում է օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ, որը ըստ ֆոնդային տվյալների վերլուծության կազմում է մինչև 6.0- 7.5մ (հետագա հաշվարկներում ընդունվելու է 7.5մ առավելագույն խորությունը): Հաշվի առնելով օգտակար հաստվածքի պարզ, գործնականում համասեռ ներքին կառուցվածքը, օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի ոչ մեծ փոփոխականությունը և կուտակի հզորությունը, յուրաքանչյուր հետախուզական փորվածքում նմուշարկումը նախատեսվում է իրականացնել կուտակի լրիվ հզորությամբ՝ մեկ միասնական նմուշով: Անհրաժեշտության դեպքում կկիրառվի հատվածամասերով (սեկցիաներով) նմուշառման եղանակը:

Պատճառաբանական մաս. Երևակման տարածքը վերագրվում է գետառողողատային տիպին, քանի որ հայցվող տեղամասը Արաքս գետից առանձնացված է վարարումներից պաշտպանող արգելաթմբով՝ պաշարները ուսումնասիրվելու են և գնահատվելու են միայն

ատատիկ վիճակում: Երևակման մակերևութային մասը ներկայացված է ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով՝ հողանման աղակալված զանգվածով, որի հզորությունը մոտ 0.5մ է:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է ավազակոպճային խառնուրդի զանգված, կավային հիմնատակող ապարներ և մոտ 48մ³ հողաբուսական շերտ: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմելու է 96մ²: Հետախուզահորերի անցման սկզբնական փուլում հեռացված հողաբուսական շերտը կարճաժամկետ կուտակվելու է հետախուզահորերին հարակից հատվածում և աշխատանքների ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվելու է խախտված հողատարածքների վերականգնման համար: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կազմելու է 127.0հազ. դրամ: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա: Կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը ընդգրկում է հետևյալ ծախսատեսակները՝ աշխատավարձը, նյութերի արժեքը, մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքը, անուղղակի ծախսերը, շահույթը, ավելացված արժեքի հարկը և այլ ծախսեր: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքներից հետո, հարթեցված մակերևույթին փռված հողերը կպարարտացվեն բնական պարարտանյութերի կիրառմամբ, վրան կկատարվի բազմամյա, անապատային աղասեր բույսերի սերմերի ցանքս: Աշխատանքները կատարվելու են բուսաբան-մասնագետների կողմից, ովքեր իրականացնելու են սերմերի ընտրության, նախապատրաստման աշխատանքներ՝ մշակում բակտերիալ պարարտանյութերով, միկրոտարրերով: Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 272.0հազ.դրամ:

Աշխատանքները սպասարկող տեխնիկական միջոցները՝ մեքենաները պետք է կահավորված լինեն արդիական փոշեորսիչներով, ինչը զգալիորեն նվազեցնելու է հանքափոշու արտանետումները մթնոլորտ: Կատարվելու է տաք և չոր եղանակին հետախուզահորերի անցման վայրերի և մոտեցող ճանապարհի ջրցանում (առավոտյան և երեկոյան), ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները: Մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում է նախատեսվում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

Աշխատանքների ընթացքում առաջացած կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անջրաթափանց հորի մեջ, աշխատանքների ավարտից հետո կատարվելու է կոնսերվացում: Տեխնիկական ջրամատակարարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվելու է ջրօգտագործման թույլտվության ստացումից հետո:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Հանրային ծանուցումը իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Երկրորդ հանրային լսումը իրականացվել է Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Ընկերությունը նախատեսում է երկրաբանական

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ուսունասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ: Փորձաքննության ընթացքում Բնության համաշխարհային հիմնադրամի /WWF Armenia/ Հայաստանյան գրասենյակի կողմից ներկայացված տեղեկատվության՝ հայցվող տեղամասում հանդիպում են թռչունների և բույսերի կարմիր գրքյան հետևյալ տեսակները՝

Թռչուններ	Գիտական անուն	Կարգավիճակ
Կարմիր գլխիչով սուզորդ	Aythya ferina	ՄԻԿԳ՝ Վտանգված (VU)
Մեծ ճայաձուկ	Clanga clanga	ՄԻԿԳ՝ Խիստ վտանգված (EN)
Մարմարային սուզորդ	Marmaronetta angustirostris	ՄԻԿԳ՝ Խոցելի (VU), ՀՀ Կարմիր գիրք
Սպիտակագլուխ սուզորդ	Oxyura leucocephala	ՄԻԿԳ՝ Վտանգված (EN), ՀՀ Կարմիր գիրք
Ծիրանագույն pelikան	Pelecanus crispus	ՄԻԿԳ՝ Խոցելի (VU), ՀՀ Կարմիր գիրք

Բույսեր	Գիտական անուն	Կարգավիճակ
Սզովիցկու գիպսոֆիլա	Gypsophyla szovitsii	ՀՀ Կարմիր գիրք
Երևանի պսեփելուս	Psephellus erivanensis	ՀՀ Կարմիր գիրք
Փշոտ սթերիգմոստեմում	Sterigmostemum acanthocarpum	ՀՀ Կարմիր գիրք
Արարատյան շուշան	Sonchus araraticus	ՀՀ Կարմիր գիրք

Տվյալ տեսակների պահպանության նպատակով դաշտային աշխատանքներին մասնակցող բուսաբան մասնագետները պետք է կենսաբազմազանության մշտադիտարկումների ժամանակ ուսումնասիրեն նաև այս տեսակները: Կենսաբազմազանության պահպանության նպատակով տեսակի չուի, բույսերի ծաղկման ժամանակաշրջանում, դաշտային աշխատանքները նախատեսվում է դադարեցնել, բացառել անհանգստացնող գործոնները՝ աղմուկը, մարդկանց և տեխնիկայի առկայությունը տեղամասում:

Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) առանձնացնել տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

** Երկրաբանահետախուզական աշխատանքների համար տրված սույն եզրակացությունը չի կարող հիմք հանդիսանալ հետագայում Ընկերության կողմից ներկայացվող արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության ստացման համար:*

Փորձաքննական պահանջներ

- Կենսաբազմազանության տեսակների պահպանության նպատակով դաշտային աշխատանքներին մասնակցող մասնագետներին իրազեկել ՀՀ կենդանիների, բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների, դրանց առանձնահատկությունների և որսորդության արգելքի մասին:
- Նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 781-Ն որոշմամբ, սահմանված դեպքերում իրականացնել ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումները:
- Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն:

Եզրափակիչ մաս

Արարատի մարզի Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի հանքերևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան